

Վարկային Կազմակերպությունը չի տրամադրում վարկեր, եթե՝

- Ընկերությունում կամ այլ բանկում կամ այլ վարկային կազմակերպությունում իրավաբանական կամ ֆիզիկական անձը, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը կամ նրանց հետ փոխկապակցված անձը կամ երաշխավորն ունեն հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի դասակարգված վարկեր, ինչպես նաև հանդիսանում են Ընկերության վարկառուի հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի դասակարգված վարկի երաշխավոր:
- Սույն կետը չի բացառում դասակարգված վարկային պարտավորություններ ունեցող հաճախորդի կողմից վարկ ստանալու հնարավորությունը այն դեպքում, երբ հաճախորդը և/կամ երաշխավորը ներկայացնում է հսկվող դասակարգված վարկի գծով ժամկետանց պարտավորություններն ամբողջությամբ մարելու վերաբերյալ ֆինանսական հաստատության կողմից տրված տեղեկանքը^[1]: Ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի դասակարգված վարկային պարտավորությունների դեպքում վարկավորումը կարող է իրականացվել վարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելուց առնվազն մեկ ամիս հետո, համաձայն ֆինանսական հաստատության կողմից տրված տեղեկանքի:
- վարկի ստացման նպատակները հստակեցված չեն,
- մտադրություն կա վարկի գումարը օգտագործել այն շրջաններում, որտեղ չկա կամ սահմանափակվում է Վարկային Կազմակերպության կողմից՝ այդ միջոցների օգտագործման վերահսկողության հնարավորությունը,
- տրամադրվում են անհասկանալի, անորոշ ծագում ունեցող և մասնագիտացված սարքավորումներ ձեռք բերելու համար, որոնց շուկայական արժեքը անհնարին է կամ դժվար է որոշել,
- ապահովված են արվեստի գործերով,
- նախատեսված են օրենքի պահանջներին հակասող գործարքներ իրականացնելու համար,
- նախատեսված են քաղաքական պաշտոնների թեկնածուներին և քաղաքական կազմակերպություններին՝ քաղաքական միջոցառումներ իրականացնելու համար,
- նախատեսված են տնտեսական և ֆինանսական գործունեության ոլորտում կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող, հափշտակության հետ կապված, ինչպես նաև Վարկային Կազմակերպության կարծիքով կասկածելի հեղինակություն ունեցող անձանց համար,
- նախատեսված են անվճարունակ, կասկածելի հեղինակություն ունեցող, ինչպես նաև կասկածելի հեղինակությամբ ղեկավարություն ունեցող ձեռնարկությունների համար,
- նախատեսված են սնանկացման գործընթացում գտնվող անձանց համար,
- նախատեսված են անգործունակ ճանաչված անձանց համար,
- նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ արգելված կամ չլիցենզավորված գործունեության վարկավորման համար /օրենսդրությամբ սահմանված լիցենզիայի պահանջի դեպքում/,
- շահումով խաղերի բիզնեսի համար,
- արժեթղթերի հետ կապված գործարքներ իրականացնելու համար՝ բացառությամբ պետական պարտատոմսերի և ԿԲ կողմից թողարկված արժեթղթերի գործարքների,
- գործող օրենսդրությամբ համարվում են ապահովվածություն չունեցող/բլանկային:

[1] Վարկը սուբյեկտիվ չափանիշներով հսկվող դասակարգված լինելու դեպքում պետք է մարվի հսկվող դասակարգված վարկային պարտավորությունն ամբողջությամբ, որը հավաստվում է ֆինանսական հաստատության կողմից տրամադրված տեղեկանքով: